ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ, ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ՎԱՀԱԳՆ ՏԵՓՈՅԱՆ

Ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատական վերլուծությունը: Ֆինանսական կառավարումը երկրի տնտեսության զարգացման հիմնասյուներից է, որը ենթադրում է ֆինանսական ռեսուրսներ հավաքելու և արդյունավետ օգտագործելու կառուցակարգերի կիրառում: Կազմակերպությունների ֆինանսական կառավարման կարևորագույն գործիքներից մեկը ֆինանսական կայունության գնահատումն է: Ֆինանսական կայունության ցուցանիշները երկրի ֆինանսական համակարգի, կորպորատիվ հատվածի և տնային տնտեսությունների ֆինանսական կայունությունը բնութագրող վիճակագրական տվյալների ամբողջությունն են[1]: Ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները բազմաթիվ են, որոնց քննական վերլուծությունը թույլ է տալիս գնահատել դրանց ազդեցությունը կազմակերպությունների վճարունակության ապահովման վրա: Կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման բազմաթիվ մեթոդների ու դրանց իրացման մեխանիզմների շարքում առանձնանում են տնտեսության ոչ ֆինանսական հատվածին բնորոշ մոտեցումները, որոնք կարևորություն են ստանում երկրի տնտեսական կայունության և տնտեսության ֆինանսական զարգացման տեսանկյունից: Տնտեսավարող սուբյեկտների գործունեության հիմնական բնութագրիչները՝ ֆինանսատնտեսական ցուցանիշները, ձևավորում են մի համակարգ, որտեղ կարևորվում են ֆինանսական կայունության գործակիցները, որոնք հնարավորություն են տալիս որոշելու կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները: Վերջինս կազմակերպություններում դրսևորվում է *վճարունակությամբ, իրացվելիությամբ, շահութաբերությամբ, ֆինանսական ռեսուրսների և գույքի օգտագործման արդյունավետությամբ, հուսալիությամբ և մրցունակությամբ*[2]:

Մենք իրականացրել ենք ՀՀ կազմակերպությունների ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատական վերլուծություն ԵԱՏՄ (Ռուսաստան, Բելառուս, Հայաստան) երկրների օրինակով: Ու-

[1] Տե՛ս https://www.cba.am/am/SitePages/finstabilitycucanish.aspx

[2] Տե՛ս **Баканов М. И., Шеремет А. Д**. Теория экономического анализа. М., 2001:

սումնասիրության հիմք են հանդիսացել 2017 թ. այդ երկրների վիճակագրական ծառայությունների պաշտոնական տվյալները:

Աղուսակ 1-ի վերլուծությունն իրականացվել է տնտեսության տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և տնտեսության այլ գերակա ոլորտների կազմակերպությունների ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշների միջոցով:

Աղյուսակ 1

Ֆինանսական կայունության ցուցանիշներն ըստ ՀՀ առևտրային կազմակերպությունների (%)[3]

Ոլորտ	Ընթացիկ իրացվելիություն	Բացարձակ իրացվելիություն	Կապիտալի շահութաբերություն	Ակտիվների շահութաբերություն	Ակտիվների եկամտաբերություն	Ինքնավարություն
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	695	680	17	9	79	114
Հեռահաղորդակցություն	508	496	6	3	43	*11*
Հանքարդյունաբերություն	*49*	37	*-75*	*-51*	*34*	29
Գյուղատնտեսություն	850	760	38	11	61	32
Այլ խոշոր հարկատու	210	*1*	-1	-5	52	970

Ուսումնասիրելով ՀՀ տնտեսության ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները՝ առանձնացրել ենք այն ոլորտները, որոնց միջոցով հիմնականում գեներացվում է ՀՀ տնտեսական ակտիվության աճը[4]: Աղյուսակ 2-ում ներկայացված է ԵԱՏՄ երկրների կազմակերպությունների ֆինանսական կայունությունը բնութագրող, մասնավորապես ընթացիկ իրացվելիության, ինքնավարության և սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության ցուցանիշների համեմատական վերլուծությունը:

Ընթացիկ իրացվելիության ցուցանիշը (Current Liquidity Ratio) ցույց է տալիս կազմակերպության ընթացիկ պարտավորությունների՝ ակտիվներով ապահովվածության աստիճանը: 3-ից բարձր գործակիցը վկայում է շրջանառու կապիտալի ոչ ռացիոնալ կառուցվածքի մասին: 1-ից ցածր գործակիցը նշանակում է, որ կազմակերպության պարտա-

[3] Այս և հետագա աղյուսակները կազմվել են հեղինակների կողմից՝ ըստ նշված գերակա ոլորտների կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների (տե՛ս azdarar.am կայքէջը):

[4] ՀՀ կառավարության կողմից հանքարդյունաբերությունը գերակա ուղղություն չի համարվում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա մեծապես ազդում է տնտեսության ակտիվության վրա, այն ներառվել է դիտարկվող ոլորտների ցանկում:

վորությունները մեծ են ակտիվներից, ինչը վկայում է կազմակերպության ոչ այնքան լավ ֆինանսական վիճակի մասին, սակայն դա չի նշանակում, որ կազմակերպությունը սնանկության ճանապարհին է: Այս ցուցանիշը կիրառվում է որոշելու տվյալ կազմակերպության ընթացիկ ակտիվներով ընթացիկ պարտավորությունները մարելու կարողությունը: Համեմատելով միևնույն ցուցանիշը ինչպես կազմակերպության նախկին տարիների, այնպես էլ միևնույն բնագավառում գործող այլ կազմակերպությունների ցուցանիշների հետ՝ կարելի է հասկանալ կազմակերպության ֆինանսական վիճակը և պարզել բարելավման կամ վատթարացման աստիճանը: Աղյուսակ 2-ից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում SS ոլորտի ցուցանիշը բավականին բարձր է, և ընթացիկ իրացվելիության խնդիր գրեթե չկա: Չափազանց ցածր է հանքարդյունաբերության ցուցանիշը՝ 49.7, սակայն, միևնույն ժամանակ, կարելի է փաստել, որ ընթացիկ իրացվելիության ցուցանիշի ցածր մակարդակը կարող է պայմանավորված լինել ստվերի առկայությամբ ու դրա չափերով: Ինչ վերաբերում է ՌԴ կազմակերպություններին, ապա կարելի է նկատել, որ 154.8 ցուցանիշով առաջատար դիրքում է գյուղատնտեսությունը, իսկ Բելառուսի Հանրապետությունում՝ 234.7 ցուցանիշով՝ հեռահաղորդակցության ոլորտը:

Ինքնավարության գործակիցը բնութագրում է կազմակերպության ակտիվների՝ սեփական կապիտալով ապահովվածության աստիճանը: Որքան մեծ է այդ ցուցանիշը, այնքան բարձր են կազմակերպության՝ սեփական միջոցներով պարտավորությունները մարելու կարողությունը, հետևաբար նաև՝ ֆինանսական կայունությունը: Հետազոտության արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաները և հեռահաղորդակցության ոլորտներն ունեն համապատասխանաբար 61.6 և 66.9 գործակիցներ: ՌԴ-ում 57.6 ցուցանիշով առաջատար դիրքում են այլ խոշոր հարկատուները, իսկ Բելառուսում՝ հանքարդյունաբերությունը՝ 85.7 գործակցով:

Բացարձակ իրացվելիության գործակիցը նախորդ ցուցանիշներից տարբերվում է նրանով, որ այստեղ չեն դիտարկվում պաշարները, քանի որ կարճաժամկետ հատվածում դրանք համարվում են քիչ իրացվելի: Ցուցանիշը համարվում է լավ, եթե այն մեծ է 2-ից: Աղյուսակ 1-ից կարելի է ենթադրել, որ բացարձակ իրացվելիության ցուցանիշով (դրամական միջոցների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերություն) ՀՀ-ում SS ոլորտն է առաջատար, իսկ ցածր ցուցանիշ ունի հանքարդյունաբերությունը:

Ակտիվների շահութաբերությունը զուտ շահույթի և միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է, որի օգնությամբ հնարավոր է որոշել, թե որքանով են արդյունավետ օգտագործվել ակտիվները եկամուտ ստանալու համար: Որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան դրական է արդյունքը և ցույց է տալիս տվյալ կազմակեր-

պության ակտիվների շահութաբերության աստիճանը տոկոսներով: Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ ՀՀ կազմակերպություններից բացասական ցուցանիշ ունի հանքարդյունաբերության ոլորտը, իսկ համեմատաբար բարձր՝ գյուղատնտեսությունը:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ որոշ երկրների կազմակերպությունների ֆինանսական կայունության ցուցանիշների համեմատական պատկերն ըստ 2017 թ. տվյալների (%)

Ընթացիկ իրացվելիության գործակից			
	ՌԴ	ԲՀ	ՀՀ
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	135.6	158.15	695
Հեռահաղորդակցություն	85.7	234.7	508
Հանքարդյունաբերություն	141.4	154.9	49.7
Գյուղատնտեսություն	154.8	117.3	856
Այլ խոշոր հարկատու	98.5	181.7	133
Ինքնավարության գործակից			
	ՌԴ	ԲՀ	ՀՀ
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	33.6	60.05	61.6
Հեռահաղորդակցություն	32.7	54.9	66.9
Հանքարդյունաբերություն	52.6	85.7	44.2
Գյուղատնտեսություն	39.9	51.6	57.2
Այլ խոշոր հարկատու	57.6	61.05	34.0
Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից			
	ՌԴ	ԲՀ	ՀՀ
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	6.3	37.6	39.2
Հեռահաղորդակցություն	-162.8	57.4	9.1
Հանքարդյունաբերություն	-43.9	34.6	-39.3
Գյուղատնտեսություն	-33.7	14.3	-18.4
Այլ խոշոր հարկատու	-71.6	42.3	-39.9

Կապիտալի շահութաբերության գործակիցը ցույց է տալիս ներգրավված միջոցների շահութաբերության մակարդակը, այսինքն՝ որքան շահույթ է գեներացվում 1 միավոր կապիտալի օգտագործումից: ՀՀ-ում, աղյուսակ 1-ի տվյալների համաձայն, բացասական ցուցանիշ է դրսևորել հանքարդյունաբերությունը՝ ի տարբերություն գյուղատնտեսության (38%):

Ակտիվների եկամտաբերության ցուցանիշով, աղյուսակ 1-ի տվյալների համաձայն, առաջատար դիրք է զբաղեցնում SS ոլորտը՝ 79%, իսկ համեմատաբար ցածր ցուցանիշ ունի հանքարդյունաբերությունը՝ 34%:

Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության ցուցանիշը ցույց է տալիս կազմակերպության՝ սեփական միջոցներով ընթացիկ գործունեությունը ֆինանսավորելու կարողությունը: Պետք է փաստել, որ ՀՀ գյուղատնտեսությունում և այլ ոլորտների խոշոր հարկատուներ ընդգրկող կազմակերպություններում բացասական ցուցանիշ է գրանցվել: Դրական արդյունք է նկատվում Բելառուսի Հանրապետությունում՝ հանքարդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Ինքնավարության ցուցանիշի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ, համեմատած ՌԴ-ի և Բելառուսի հետ, ՀՀ-ում առավել բարենպաստ պայմաններում է ՏՏ ոլորտը, իսկ հեռահաղորդակցությունը, հանքարդյունաբերությունը և գյուղատնտեսությունը զիջում են մյուս երկրներին:

Մնանկացման վարկանիշավորումը և ֆինանսական կայունության փոխառնչությունները: Ֆինանսական կայունության ցուցանիշների հետ մեկտեղ՝ ուսումնասիրել ենք նաև ՀՀ կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի կազմն ու կառուցվածքը և համեմատական վերլուծություն կատարել ԵԱՏՄ երկրների (մասնավորապես Բելառուսի և Ղազախստանի) կազմակերպությունների պարտավորությունների և ժամկետանց պարտքերի հետ: Աղյուսակ 3-ում ներկայացված են Հայաստանի, Ղազախստանի և Բելառուսի հանրապետությունների կազմակերպությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը 2012-2017 թթ.: Աղյուսակը կազմվել է ՀՀ, ԲՀ և ՂՀ վիճակագրական ծառայությունների պաշտոնական տվյալներով:

ՀՀ կազմակերպությունների պարտավորություններն ու ժամկետանց պարտքերը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 3 տրիլիոն 818 մլրդ ՀՀ դրամ: Ուսումնասիրելով 2012-2017 թթ. վիճակագրությունը՝ տեսնում ենք, որ կազմակերպությունների պարտավորություններն աճել են գրեթե 75%-ով: 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ Բելառուսի Հանրապետությունում կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունները կազմել են 8.2 տրիլիոն ՀՀ դրամ, իսկ ժամկետանց պարտքերը՝ ընդհանուր պարտավորությունների 9.59%-ը: Ղազախստանի Հանրապետության կազմակերպությունների պարտավորությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ պարտավորությունները կազմել են 63 տրիլիոն 851 մլրդ ՀՀ դրամ, որից 0.31%-ը ժամկետանց պարտավորություններն են: Ընդհանրացնելով ԵԱՏՄ երկրների կազմակերպությունների ֆինանսական իրավիճակի վերլուծությունը ժամկետանց պարտքերի և պարտավորությունների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ առավել բարենպաստ պայմաններում

է եղել ՀՀ-ն՝ ժամկետանց պարտքերի 0.03% ցուցանիշով, այնուհետև՝ Ղազախստանը՝ 0.54%: Գնահատելով ԵԱՏՄ երկրների տնտեսության նշված ոլորտների ֆինանսական կայունության գործակիցները՝ կատարվել է *նաև ֆինանսական կայունության և սնանկացման հավանականության ինտեգրալային գնահատում,* որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում[5]: Ֆինանսական կայունության գնահատման ինտեգրալային մեթոդի համաձայն՝ ֆինանսական կայունության բացասական տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցը 0-ից ցածր արժեք է ունենում, իսկ իրացվելիության գործակիցը՝ 10-ից ցածր: *Ֆինանսական կայունության ոչ բավարար տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցն ընկած է 0-ից 3 միջակայքում, իսկ իրացվելիությունը՝ 10-20: Ֆինանսական կայունության տիրույթ է համարվում, երբ ինքնավարության գործակիցն ունենում է 3-ից մեծ արժեք, իսկ իրացվելիության գործակիցը՝ 20-ից մեծ:*

Աղյուսակ 3

ԵԱՏՄ երկրների կազմակերպությունների պարտավորությունները և ժամկետանց պարտքերը (մլն ՀՀ դրամ)

	Պարտավորություններ			Ժամկետանց պարտավորություններ (%-ով)		
	ՀՀ	ՂՀ	ԲՀ	ՀՀ	ՂՀ	ԲՀ
2012 թ.	2185275.60	-	-	743.70 (0.03)	-	
2013 թ.	2148253.60	-	-	822.50 (0.04)	-	-
2014 թ.	2628316.40	101541183.00	4337822.83	1995.50 (0.08)	853048.93 (0.84)	264454.46 (6.10)
2015 թ.	2690794.40	53703141.00	4386807.21	22115.70 (0.82)	412516.91 (0.77)	297035.43 (6.77)
2016 թ.	3095807.10	62392171.00	7257484.73	927.60 (0.03)	337729.39 (0.54)	573548.16 (7.90)
2017 թ.	3818613.20	63851823.00	821046.79	-	195280.92 (0.31)	78775.30 (9.59)

[5] Տե՛ս **Кюрджиев С. П., Мамбетова А. А., Пешкова Е. П**. Интегральная оценка финансового состояния предприятий региона, // Экономика региона. Т. 12, вып. 2, 2016, էջ 586-601:

Աղյուսակ 4

ԵԱՏՄ երկրների առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության և սնանկացման հավանականության գնահատումը ֆինանսական վիճակի ինտեգրալային գնահատման մեթոդով

	ՌԴ		ԲՀ		ՀՀ	
	Իրացվելիություն	Ինքնավարություն	Իրացվելիություն	Ինքնավարություն	Իրացվելիություն	Ինքնավարություն
SS	5.76	2.10	6.72	3.76	29.52	3.86
Հեռահաղորդակցություն	3.64	2.05	9.97	3.44	21.58	4.19
Հանքարդյունաբերություն	6.01	3.29	6.58	5.36	2.11	2.77
Գյուղատնտեսություն	6.58	2.50	4.98	3.23	36.36	3.58
Այլ խոշոր հարկատու	4.18	3.61	7.72	3.82	5.65	2.13

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, ՀՀ-ում, բացի հանքարդյունաբերությունից, մյուս ոլորտների կազմակերպությունները ֆինանսապես կայուն են, և սնանկացման հավանականությունը գնահատվում է ցածր: ՌԴ-ում իրացվելիության ցուցանիշով առաջատար դիրք է զբաղեցնում գյուղատնտեսությունը, ինքնավարության ցուցանիշով՝ տնտեսության խոշոր հարկատուները, իսկ Բելառուսի Հանրապետությունում 9.97 գործակցով՝ հեռահաղորդակցությունը, 5.36 գործակցով՝ հանքարդյունաբերությունը:

Կազմակերպությունների սնանկացումը կանխարգելելու հիմնախնդիրը շուկայական տնտեսական հարաբերություններում առանցքային տեղ է զբաղեցնում ֆինանսական վիճակի բարելավման առումով: Վճարունակությունը, մեծ հաշվով, տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեությամբ ստեղծված կարողությունն է՝ սահմանված ժամկետներում մարելու իր պարտավորությունները: «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը վերջին 8 տարում թեև 3 անգամ խմբագրվել է, բայցևայնպես պետք է փաստել, որ դեռևս կան անկատար դրույթներ, որոնք խոչընդոտելու են օրենքի լիարժեք կիրառումը: Կարելի է նկատել, որ 2016-2017 թթ. սնանկացած կազմակերպությունների թվի աճը մեծ հաշվով պայմանավորված է ՊԵԿ-ի իրավական վարչության կազմում սնանկության բաժին ստեղծելու, սնանկության գործերով դատարաններ հիմնելու հանգամանքով և օրենսդրական ակտերի փոփոխությամբ:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2012-2016 թթ. ՀՀ-ում և ՌԴ-ում սնանկացած կազմակերպությունների թիվը: Հիմք են ընդունվել ՀՀ և ՌԴ վիճակագրական ծառայությունների պաշտոնական տվյալները:

Գծապատկեր 1

Սնանկացած կազմակերպությունների թիվը ՀՀ-ում և ՌԴ-ում 2012-2016 թթ.[6]
(հարյուր հազար բնակչի հաշվով)



ՀՀ կազմակերպությունների սնանկության վիճակագրությունը ավելի պատկերավոր դարձնելու համար համեմատել ենք ՌԴ-ի համապատասխան ցուցանիշների հետ: Գծապատկեր 1-ի համաձայն՝ 2012 թ. համեմատ 2016 թ. ՌԴ-ում սնանկացած կազմակերպությունների թիվը աճել է գրեթե 1.5 անգամ՝ 86109-ից հասնելով 114065-ի: Հարյուր հազար բնակչի հաշվով 2012-2016 թթ. ՀՀ-ում սնանկացած կազմակերպությունների թիվը աճի միտում է ունեցել: Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տվյալների՝ 2017 թ. միայն առաջին ինը ամիսներին սնանկ է ճանաչվել 927 կազմակերպություն, այնինչ 2010 թ. դրանց թիվն ընդամենը 79 էր[7]:

Ուսումնասիրելով ՀՀ և ՌԴ սնանկ ճանաչված կազմակերպությունների բաշխվածությունն ըստ ոլորտների շահութահարկի և եկամտահարկի հայտարարագրերում կամավոր ներկայացված տվյալների՝ կարելի է տեսնել, որ կազմակերպությունների սնանկացումը հիմնականում պայմանավորված է չմարված վարկերի մեծ տեսակարար կշռով:

Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ-ում սնանկ ճանաչված կազմակերպությունների թիվը 2010-2017 թթ.: Հիմք ենք ընդունել ՊԵԿ-ի պաշտոնական տվյալները:

Նշենք, որ մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտներում ՀՀ կազմակերպությունների 51%-ը սնանկացել է հարկային պարտավորությունների ավելացման պատճառով, քանի որ դրա հետևանքով կազմակերպությունների շրջանառությունը նվազում է, գնողունակությունը անկում է ապրում:

---

[6] Տե՛ս http://www.gks.ru/

[7] Տե՛ս http://www.petekamutner.am/

Գծապատկեր 2

2010-2017 թթ. ՀՀ սնանկացած կազմակերպությունների թիվն՝ ըստ ոլորտների



ՀՀ-ում սնանկության գործերի քննությունը նաև ցույց է տալիս, որ բավականին քիչ են կիրառվում պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրերը, որոնք բովանդակային առումով ներառում են պարտատերերին կատարվելիք վճարումների կարգը, ժամկետները և չափը, պարտատերերի պահանջների բավարարման երաշխիքները, պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար նախատեսված միջոցառումների ցանկը, պարտապանին պատկանող գույքի վաճառքի կարգը և դրանից ստացվելիք եկամուտները, պարտապանի

Գծապատկեր 3

2012-2016 թթ. ՌԴ սնանկացած կազմակերպությունների թիվն ըստ ոլորտների[8]



[8] Տե՛ս http://www.forecast.ru/_ARCHIVE/Analitics/PROM/2017/Bnkrpc-3-17.pdf

գործունեության շարունակման դեպքում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները և այլն: Ֆինանսական առողջացման ծրագրի բացակայությունը, բնականաբար, ենթադրում է, որ չկա շահագրգռվածություն, և դատական ընթացակարգերը մեծամասամբ ձևական են: Ներկայումս, կազմակերպությունների ֆինանսական առողջացման հիմնախնդրի լուծման նպատակով կառավարությունն իր գործունեության ծրագրով նախատեսում է ընդլայնել ֆինանսապես անառողջ վիճակում գտնվող կազմակերպությունների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի կիրառման պրակտիկան, ինչը կապահովի տնտեսության մեջ չվճարումների, մասնավորապես՝ կուտակված հարկային պարտավորությունների հիմնախնդրի արմատական լուծումը: Խնդրին համակարգային մոտեցում ցուցաբերելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել դատարան դիմած սնանկության գործերի վիճակագրությանը:

Գծապատկեր 4

ՀՀ և ՌԴ ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը սնանկության գործերով 2013-2017 թթ. (հարյուր հազար բնակչի հաշվով)[9]



Նկատենք, որ 2013-2017 թթ. արձանագրվել է սնանկության գործերի քննության համար դատարան դիմած սուբյեկտների կտրուկ աճ, ինչն էլ անհրաժեշտություն առաջացրեց սնանկության գործերով դատարան ստեղծելու[10]: 2013 թ. սնանկության գործերի թիվը ՀՀ-ում կազ-

[9] http://www.forecast.ru/_ARCHIVE/Analitics/PROM/2017/Bnkrpc-3-17.pdf

[10] Տե՛ս ՀՀ-ում գործող առաջին ատյանի (10 դատարան) 151 դատավորներից 92-ը մասնագիտացած են քաղաքացիական գործերով, իսկ 59-ը՝ քրեական: Սնանկության դատարանը պետք է գործի 12 դատավորի թվակազմով: «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ սնանկության դատարանը գործում է 2019 թ. հունվարի 1-ից, և դրանից սկսած մեկ ամսվա ընթացքում բոլոր սնանկության գործերը փոխանցվում են սնանկության դատարան և բաշխվում սնանկության դատարանի դատավորների միջև:

մել է 3376, իսկ 2017 թ.՝ 9218[11]: Հաճախադեպ են *պարտադրված* սնանկությունները, որոնք պայմանավորված են հարկային պարտավորությունների չկատարմամբ: Գծապատկեր 4-ից երևում է, որ ՌԴ դատարաններում քննվող սնանկության գործերի թիվը 2012 թ. համեմատ 2013 թ. նվազման միտում է գրանցել, իսկ 2016 թ. գերազանցել է նախորդ 4 տարիները՝ հասնելով 34,57-ի: Պետք է փաստել, որ սնանկացած կազմակերպությունների գերակշիռ մասը խոշոր վարկ ունեցող կազմակերպություններն են: Երբեմն դրանք էլ իրենց հերթին կարող են պատճառ դառնալ մեծ և փոքր բիզնեսի անվճարունակության՝ ազդելով դրանց շրջանառության և շահութաբերության վրա: Կարելի է նկատել, որ կամավոր սնանկացումները ևս կարող են լինել վարկերի չմարման հետևանք: Կազմակերպությունների տնտեսապես ակտիվ գործունեության համար խոչընդոտ է նաև հարկային, մաքսային վճարների, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերի, իրավական պաշտպանության ու պետական աջակցության բացակայությունը: Անհրաժեշտ է բարելավել անվճարունակ կազմակերպությունների վերականգնմանն ուղղված գործիքները՝ սկսած գործունեության ծրագրի վերանայումից մինչև վարկային պարտավորությունների վերանայումը:

Օրենսդրական և կառուցակարգային թերի լուծումները էապես կարող են մեծացնել կոռուպցիոն ռիսկերը: Եվրոպական շատ երկրներում արդարադատության ոլորտում գործում է մշտադիտարկման համակարգ, ինչը ՀՀ-ում բացակայում է: Սնանկության գործը վարելու համար պետական բյուջեից մեծ գումար է հատկացվում, բայց ապարդյուն: Վերոնշյալ 2 գործոնները հանգեցնում են դատական գործերի անհարկի ձգձգումների, և անհրաժեշտություն է առաջանում ներդնել գործերի քննման հստակ համակարգ:

Ֆինանսական կայունության ապահովումը բնութագրում է առևտրային կազմակերպության արտադրատնտեսական գործունեության կայունությունը երկարաժամկետ կտրվածքով, որը հիմնականում պայմանավորված է կապիտալի կառուցվածքով: Շատ կազմակերպություններ գերադասում են ունենալ նվազագույն սեփական միջոցներ և գործունեությունը ֆինանսավորել արտաքին և ներքին աղբյուրներից ներգրավված ֆինանսական միջոցների հաշվին: Կազմակերպությունների սնանկացման հիմնական պատճառ է խոշոր ծավալով փոխառու միջոցների ներգրավումը: Ուստի դրանց կայունության վճռորոշ պայմաններից մեկը սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությունն է, որն ապահովում է կազմակերպության վճարունակությունը: Որքան շահութաբեր է կազմակերպությունը, այնքան այն կարող է ունենալ ավելի մեծ ներդրում պետության սոցիալական ոլորտում, մեծացնել նրա տնտեսական ներուժը, ստեղծել աշխատատեղեր

[11] Տե՛ս «ՀՀ-ում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ», Բարձրագույն դատական խորհուրդ, Եր., 2018, էջ 13:

և վերջապես՝ բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, որը կնպաստի մարդկանց կենսամակարդակի բարելավմանը և տնտեսական աճի խթանմանը: ՀՀ-ում կազմակերպությունների զարգացումը խոչընդոտող կառավարման խնդիրներից է կոռուպցիան, որոշ պետական պաշտոնյաների և մասնավոր բիզնեսի կապերը, ձեռնարկատերերի՝ առանձին ոլորտներում գերիշխող դիրքը: Այս ամենի հետևանքով մի շարք կազմակերպություններ խուսափել են հարկային պարտավորություններից, երկրում տիրել է արդար մրցակցության պակաս, որն էլ իր հերթին հանգեցրել է սնանկության աստիճանական աճին: Ներկայումս քայլեր են ձեռնարկվում իրավիճակը շտկելու ուղղությամբ, ինչի շնորհիվ կպակասեն կեղծ սնանկ ճանաչվող կազմակերպությունները:

Դիտարկելով ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունների կառուցվածքը, կտեսնենք, որ 2018 թ. հունիսի դրությամբ պարտքը 3.427.830 մլն դրամ է, որից ժամկետանց մասը կազմում է 1.368 մլն դրամ կամ 0.04%: 2.481.435 մլն դրամը կամ 72%-ը բանկերի վարկերի և փոխառությունների գծով պարտքերն են, 946.396 մլն դրամը կամ 27%-ը՝ կրեդիտորական պարտքերը, իսկ մնացածը՝ պարտքեր գնումների գծով ու ստացված ընթացիկ կանխավճարներ և այլն: Ինչ վերաբերում է Հայաստանի և այլ երկրների կազմակերպությունների միջև կրեդիտորական պարտքերին, ապա 2018 թ. հունիսի վերջի դրությամբ 946.296 մլն դրամից հայկական կազմակերպություններին բաժին է ընկնում 599.089 մլն դրամը կամ ընդհանուր պարտքի 63%-ը, ԱՊՀ երկրներին՝ 84.057 մլն դրամ, որից 73.719 մլն-ը կամ 88%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, ԵՄ երկրներին՝ 107.656 մլն դրամ, որից 34.474 մլն կամ 32%-ը բաժին է ընկնում Իսպանիային, և այլ երկրներ՝ 155.592 մլն դրամ, որից 62.444 մլն-ը կամ 40%-ը՝ Միացյալ Արաբական Էմիրություններին:

Նկատենք, որ սնանկացող ընկերությունների աճի պայմաններում մեծ դերակատարում ունեն դրսից իրականացվող ուղղակի ներդրումները, որոնք ենթադրում են արտասահմանյան կազմակերպությունների՝ տեղական շուկայում դուստր ձեռնարկության հիմնումը՝ ունենալով բաժնետոմսերի վերահսկելի (50%-ը գերազանցող) մասը: Համաձայն ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաշխարհային ներդրումային հաշվետվության՝ Հայաստան ներհոսող օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնք բաղկացած են ներդրված կապիտալից և տրամադրված վարկերից, 2012 թ. կազմել են 497 մլն ԱՄՆ դոլար, 2013 թ.՝ 346 մլն ԱՄՆ դոլար, 2014 թ.՝ 404 մլն ԱՄՆ դոլար, 2015 թ.՝ 178 մլն ԱՄՆ դոլար, 2016 թ.՝ 338 մլն ԱՄՆ դոլար, 2017 թ.՝ 246 մլն ԱՄՆ դոլար: Համեմատելու համար նշենք, որ 2017 թ. Վրաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 1.862 մլն ԱՄՆ դոլար, Ռուսաստանինը՝ 25.284 մլն ԱՄՆ դոլար, Բելառուսինը՝ 1.276 մլն ԱՄՆ դոլար և Ադրբե-

ջանինը՝ 2.867 մլն ԱՄՆ դոլար: 2017 թ. օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալով ԱՊՀ երկրներից գերազանցում ենք Ղրղզստանին, Մոլդովային, Տաջիկստանին և Ուզբեկստանին:

Այսպիսով, ՀՀ-ում սնանկ կազմակերպությունների տարեցտարի աճի պայմաններում կազմակերպությունները կարող են կանխարգելել և հաղթահարել ֆինանսական դժվարությունները, եթե կրճատեն ավելորդ ծախսերը, վերանայեն բյուջեն, ներդնեն վերահսկողական և ռիսկերի կառավարման համարժեք և արդյունավետ համակարգ և կիրառեն պարտքերի մարման առաջնահերթություն, որն ընկերությանը զերծ կպահի իրացվելիության ցածր մակարդակ ունենալուց:

Բանալի բառեր – *ֆինանսական կայունություն, առևտրային կազմակերպություն, սնանկության հավանականության գնահատում, սնանկացման վարկանիշավորում, կազմակերպությունների պարտավորություններ և ժամկետանց պարտքեր*

ГРИГОР МНАЦАКАНЯН, ВАРСЕНИК САРГСЯН, ВААГН ТЕПОЯН – *Проблемы предотвращения банкротства в контексте финансовой стабильности.* – Финансовая стабильность экономики в стране ощутимо влияет на платёжеспособность компаний и способствует предотвращению банкротства. В статье осуществлён сравнительный анализ данных по финансовой устойчивости в странах Евразийского экономического союза. С помощью комплексного показателя финансового положения выявлено, как организации и компании этих стран исполняют свои обязательства, учтены не уплаченные ими в срок долги, оценены рейтинги финансовой устойчивости и банкротства.

Ключевые слова: *финансовая устойчивость, торговая компания, вероятность банкротства, рейтинг банкротства, обязательства и просроченная задолженность*

GRIGOR MNATSAKANYAN, VARSENIK SARGSYAN, VAHAGN TEPOYAN – *Bankruptcy Prevention Issues in the Context of Financial Stability.* – Ensuring the financial sustainability of the country's economy greatly affects the solvency of companies and later, as well, on bankruptcy prevention. Comparative analysis of the financial sustainability indicators of the EAEU countries is presented in the work.

Studying the extent to which organizations' liabilities and overdue debts are measured in terms of the countries surveyed, an assessment of the financial stability and bankruptcy indicators of EAEU has been implemented by means of an integrated assessment of the financial position.

Having examined the commitments and overdue debts of the organizations on the basis of the countries under consideration, through the integrated assessment method of the financial condition has been carried out an assessment of the financial stability and bankruptcy risk indicators of the EAEU commercial organizations.

Key words: *financial stability, commercial organization, bankruptcy risk assessment, bankruptcy rating, organization liabilities and overdue debts*

Ներկայացվել է՝ 05.02.2019, գրախոսվել է՝ 12.02.2019, ընդունվել է տպագրության՝ 22.04.2019